ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԺԲ.00.01. - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРТУР ГЕВОРГОВИЧ ДАНИЕЛЯН

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ ФОРМИРОВАНИЯ ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 – «Теория и история государства и права, история правовых учений»

Ереван – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Վ.Վ. Ստեփանյան**

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ս.Ս. Քոչարյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. դեկտեմբերի 21-ին ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012թ. նոյեմբերի 21-ին

Մասնագիտական խորհրդի գիտ.քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Գ. Վաղարշյան**

Тема диссертации утверждена в институте философии, социологии и права НАН Республики Армения

Научный руководитель: доктор юрид. наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **В.В. Степанян**

кандидат юрид.наук, доцент **С.С. Кочарян**

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита диссертации состоится 21 декабря 2012г. в 14^{00} часов на заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомится в читательном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 21 ноября 2012г.

Ученный секретарь специализированного совета,
кандидат юрид. наук, доцент **А.Г. Вагаршян**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտվող նյութի արդիականությունը և թեմայի ուսումնասիրության վիճակը: Մարդկային մտքի անշեղ կատարելագործումը հանգեցրել է մի իրավիճակի, երբ այն ոչ միայն պարզապես ներգործում է աշխարհում ընթացող գրեթե բոլոր զարգացումների վրա, այլև մեծամասամբ կանխորոշում է դրանք: Այս կտրվածքով՝ գիտակցականը ձեռք է բերել աննախադեպ առանցքային նշանակություն, սակայն, ժողովրդավարության ու քաղաքակրթության նվաճումներին զուգահեռ, դրա բացասական դրսևորումներն իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն հասարակական-քաղաքական կյանքում (բազմաթիվ ռազմական բախումներ, ահաբեկչություններ և այլն), այլև՝ բնական երևույթներում (այլևս կասկած չի հարուցում, որ տարաբնույթ բնական աղետների անդառնալի տարածման պատճառը հենց մարդն է՝ իր գիտակցական գործունեությամբ):

Մարդկությանը չափազանց դժվարությամբ են տրվում հասարակական հարաբերությունների կարգավորման լավագույն լուծումները, իսկ երբ նաև դրանք են խոցելի դառնում, ապա էական կորուստներն այլևս անխուսափելի են: Ընդ որում, դրանց խոցելիությունը մեծամասամբ պայմանավորված է հենց սուբյեկտիվ գործոններով, սոցիալ-քաղաքական մշակույթի անընդունելի դրսևորումներով:

Այս առումով հասարակության ինքնագիտակցությունը՝ ընդհանրապես, իսկ իրավագիտակցությունն ու իրավական մշակույթը՝ մասնավորապես, մշտապես գտնվել են փիլիսոփաների, քաղաքագետների ու, հատկապես, իրավագետների համակողմանի հետազոտության դաշտում: Միաժամանակ, երբ հասարակությունում ընթանում են արմատական, բեկումնային սոցիալ-քաղաքական վերափոխումներ, որպիսիք արձանագրվեցին մեր երկրում վերջին երկու տասնամյակի ընթացքում, իրավական մշակույթի ձևավորման հիմնահարցերն ու միտումները, դրանք հնարավորինս «ուղղորդված» դարձնելու խնդիրը ձեռք են բերել աննախադեպ առանցքային մեծ նշանակություն:

Իրավական մշակույթն անխուսափելիորեն հանդիսանում է իրավական բարեփոխումների ողջ գործընթացը կանխորոշող, ուղղորդող կարևորագույն գործոն: Առանց այդ իրավական երևույթի առնչությամբ գիտագործնական համալիր հետազոտության, ինչն անհրաժեշտ է ոչ միայն վերջինիս համարժեք նշանակությունը պատկերացնելու, այլև դրա ձևավորման առավել նախընտրելի ուղիներ բացահայտելու ու կիրառելու համար, հնարավոր չէ ապահովել ինչպես բնականոն իրավաստեղծ գործունեություն, այնպես էլ իրավաչափ իրավակիրառ պրակտիկա:

Իրավական մշակույթի վերաբերյալ, թերևս, արժեքավոր դատողությունների և եզրահանգումների կարելի է հանդիպել հայրենական իրավագետների առանձին աշխատություններում, սակայն այն դեռևս չի ընտրվել որպես գիտական հետազոտության ինքնուրույն և համալիր ուսումնասիրության նյութ, բավարար չափով չեն բացահայտվել դրա իրավափիլիսոփայական և զուտ իրավահոգեբանական տեսակետները: Ինչ խոսք, այս ուղղությամբ խիստ նշանակալից ու արժեքավոր կարող է համարվել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» աշխատությունը: Ի դեպ,

սույն աշխատության առանձին դրույթների համար նշված գիտական հետազոտության արդյունքները հիրավի ունեցել են ելակետային նշանակություն:

Իրավական մշակույթին և իրավագիտակցությանն առնչվող առանձին հարցադրումների գիտական հետազոտությանն են նվիրված նաև հայ իրավագետների մի շարք աշխատություններ: Սակայն նրանք այդ հարցադրումներին անդրադարձել են այնքանով, որքանով այն անհրաժեշտ է եղել իրենց ընտրած թեմայի հետազոտության համալիրությունն ապահովելու տեսանկյունից, մինչդեռ սույն ատենախոսությունում որպես հետազոտության նյութ են ընտրվել բացառապես այն հարցերը, որոնք, մեր պատկերացմամբ, ըստ գիտագործնական չափանիշների՝ ինքնուրույն խորացված ուսումնասիրության կարիք ունեն:

Ինչևէ, սույն աշխատությամբ առաջադրված եզրահանգումները և առաջարկությունները, կարծում ենք, նկատելի չափով հնարավորություն կընձեռեն բարելավելու իրավաստեղծ գործունեությունը, իրավակիրառ պրակտիկայում համարժեքորեն հաշվի առնելու իրավական մշակույթի գործոնը և առավել ամբողջական դարձնելու այդ իրավական երևույթի նկատմամբ ընկալումները:

Վերը նշված հարցադրումների համալիր ուսումնասիրությունն ապահովելու նկատառումով հարկ է եղել հետազոտել ոչ միայն խնդրո առարկայի իրավագիտական, այլև փիլիսոփայական և հոգեբանական հայեցակետերը, քանզի իրավական մշակույթը զուտ իրավական երևույթ չէ, այն օժտված է որոշակի հոգեբանական ու փիլիսոփայական բաղադրիչներով: Իրավական մշակույթի թեման անխուսափելիորեն պարտադրում է, որպեսզի հետազոտման նյութ դառնան, հատկապես, քիրստոնեության ուսմունքի ու հասարակական գիտակցության և, հատկապես՝ իրավագիտակցության փոխհարաբերության հայեցակետերը, որպեսզի բացահայտվեն այդ կապի ողջ խորությունն ու գիտագործնական արժեքը, ինչի առնչությամբ բնորոշ է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հետևյալ խոսքը. «Աստվածաշնչյան սկզբունքներին խարսխված իրավական կանոնները, օրենքներն ու սահմանումները դարեր շարունակ ձևավորել են օրենքի, իրավունքի և պարտականության հասկացությունն ու ընկալումը՝ իբրև հասարակական կյանքի բնականոն զարգացման ու առաջընթացի գործոններ»[1]:

Խնդիրն այն է, որ իրավաստեղծ գործունեության մեջ և իրավակիրառ պրակտիկայում կամա թե ակամա քննարկման առարկա են դառնում սոցիալ-հոգեբանական գործոնները, մասնավորապես, ներկայումս նկատելի հնչեղություն է ձեռք բերել հանրային քննարկումների ինստիտուտը, հասարակական կարծիքի բացահայտման պահանջը և այլն, սակայն դրանց և նմանաբնույթ այլ հարցադրումների առնչությամբ գիտական ուսումնասիրությունները չեն կարող արդյունավետ լինել, եթե դրանք իրականացվեն բացառապես իրավական հարթության վրա:

Հետազոտման առարկան, նպատակը և խնդիրները: Ատենախոսությունում հետազոտված են թեմային անմիջականորեն առնչվող այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են «իրավագիտակցություն» և «իրավական մշակույթ» եզրույթների արդի գիտական ընկալումն ու դրանց որոշ տարրերի վերաիմաստավորման հիմքերը, իրավական մշա-

[1] Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ, «Գիր օրհնության», Գ. Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» (Եր.: Նժար, 2005) մենագրության առաջաբան:

կույթի պատմաքաղաքական և արդի նախադրյալները, իրավագիտակցության և իրավական մշակույթի ազդեցությունն իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության վրա, իրավական մշակույթի զարգացման գերակա ուղղությունները և այլն:

Հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու նկատառումով աշխատությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել «իրավագիտակցություն» և «իրավական մշակույթ» եզրույթների արդի գիտական ընկալման և դրանց որոշակի բաղադրիչների վերահիմաստավորման ուղղությունները,
- համակարգված տեսքով ներկայացնել իրավական մշակույթի ձևավորման ինչպես պատմաքաղաքական, այնպես էլ արդի նախադրյալներն ու գործոնները,
- համալիր հետազոտություններ անցկացնել իրավաստեղծ, իրավակիրառ, ինչպես նաև իրավաքաղաքական կյանքի այլ ոլորտներում իրավագիտակցության և իրավական մշակույթի ներգործության համակարգի առնչությամբ, բացահայտել դրա բոլոր դրսևորումները և գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնել դրանց բարելավման վերաբերյալ,
- գիտականորեն հիմնավորել ազգային իրավական մշակույթի կիսաբաց բնույթն ու առանձնահատկությունները, կանխորոշել դրա զարգացման հետագա ուղղությունները,
- համակարգված ներկայացնել իրավունքի մշակույթի զարգացման գերակա ուղիները, հիմնավորել դրանց նախընտրելի լինելու անհրաժեշտությունը,
- հետազոտել ու սպառիչ ներկայացնել իրավական մշակույթի ձևավորման արդի միտումները,
- հատուկ հետազոտել իրավունքի սկզբունքների դերն իրավական մշակույթի զարգացման գործընթացում:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Ատենախոսության գիտական նորույթը «իրավական մշակույթ» և «իրավագիտակցություն» եզրույթների արդի գիտական ընկալումների վերահիմաստավորման անհրաժեշտության հիմնավորման, իրավական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական ու արդի նախադրյալների շրջանակի բացահայտման, իրավական մշակույթի զարգացման գերակա ուղղությունների հստակեցման, իրավունքի սկզբունքների և իրավական մշակույթի փոխազդեցության վերլուծության, միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխհարաբերության համատեքստում իրավական մշակույթի դրսևորումների ուսումնասիրության, իրավաստեղծ, իրավակիրառ և այլ ոլորտներում իրավական մշակույթի ազդեցության բացահայտման առնչությամբ գիտականորեն հիմնավորված եզրահանգումների ներկայացումն է:

Ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, տեսական հիմնադրույթներ և ընդհանրացված առաջարկություններ, որոնք, հանդիսանալով գիտական նորույթ, հանգում են հետևյալին.

1. Հայ ազգային իրավական մշակույթը՝ այլ իրավական մշակույթների հետ փոխհարաբերության տեսանկյունից, հանդիսանում է կիսաբաց, սակայն այս դեպքում հիմնական առանձնահատկությունը թելադրված է ոչ այնքան անցումային գործոնով, երբ

սոցիալ-քաղաքական արմատական վերափոխումների պարագայում օտարածին իրավական երևույթների նկատմամբ դրսևորվում են համեմատաբար նկատելի հանդուրժողականություն և դրան զուգահեռ՝ ազգային ավանդույթներին ու մտածելակերպին առնչվող իրավական երևույթների նկատմամբ պահպանողական ձգտումներ, որքան յուրովի ընկալվող նեղ գերատեսչական և ոչ իրավաչափ այլ շահերով:

Ատենախոսությունում համակարգված կերպով ներկայացված են գիտագործնական բնույթի առաջարկություններ, որոնք միտված են այդ հիմնախնդրի լուծմանը և, միաժամանակ, հիմնավորված է համարվել ազգային իրավական մշակույթը նաև հետագայում կիսաբաց բնութագրիչներով, սակայն արդեն բացառապես դեպի համամարդկային արժեքները կողմնորոշված որակով պահելու անհրաժեշտությունը:

2. Ազգային իրավական մշակույթն ընդհանուր առմամբ համահունչ չէ, հատկապես, զանգվածային իրավախախտումների կանխարգելման ու բացահայտման խնդիրների բարեհաջող լուծմանը: Այդ առնչությամբ պետական քաղաքականության մեջ դրսևորվում են ծայրահեղ, իրարամերժ մոտեցումներ. մի դեպքում, ըստ էության, հանրային վտանգ չներկայացնող արարքների առնչությամբ անվերապահորեն նախապատվությունը տրվում է պետական հարկադրանքին (այդ թվում՝ քրեական պատժամիջոցների կիրառմանը), մեկ այլ դեպքում՝ պարբերաբար շրջանառության մեջ դրվող տնտեսական բնույթի «համաներման» ինստիտուտին (օրինակ՝ հարկերը վճարելուց չարամտորեն խուսափողներին հաշվարկված հարկերից ու տուգանքներից ազատելը):

Հիմնավորելով ու ելակետ ընդունելով հիշյալ դիրքորոշումը՝ պաշտպանության են ներկայացված իրավական այն չափանիշները, որոնք զանգվածային իրավախախտումների դեմ պայքարը կարող են դարձնել առավել արդյունավետ ու կանխատեսելի: Մասնավորապես, հիմնավորվել է հիշյալ քաղաքականությունն այնպիսի չափանիշներով կառուցելու անհրաժեշտությունը, ինչը խարսխված կլինի տնտեսական բնույթի «համաներման» ինստիտուտի բացառման կամ խիստ սահմանափակման, մանր և միջին գործարարության խրախուսման, մարդկային ու ֆինանսական ռեսուրսների անհարկի ծախսերի կրճատման վրա և այլն:

3. Իրավական նորմի շարադրանքի արտաքին հատկանիշներով բարդությունն ու անորոշությունն ինքնին հիմք չէ այն իրավական որոշակիության տեսանկյունից սպառիչ գնահատելու համար: Իրավական որոշակիության երաշխիքը ոչ այնքան ձևական նկատառումով իրավական նորմի տեքստն է, որքան տվյալ իրավական մշակույթում վերջինիս ընկալման ու կիրառման փորձը, իրավասու մարմինների կողմից իրավունքի գերակայությամբ թելադրված միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման ունակությունը: Միևնույն եզրույթը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ տարբեր իրավական մշակույթներում, ինչը թելադրված է տվյալ իրավական մշակույթում տվյալ եզրույթի ընկալման փորձով:

Այսպիսով, իրավական որոշակիության սկզբունքն ածանցված է իրավունքի գերակայության սկզբունքից և կարող է երաշխավորվել բացառապես հիշյալ սկզբունքին համահունչ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման դեպքում: Մյուս կողմից, իրավական որոշակիությունը հանդիսանում է իրավունքի գերակայության սկզբունքի անհրաժեշտ նախադրյալ:

4. Իրավական մշակույթի տեսանկյունից «իրավաստեղծ գործունեություն» եզրույթը ձեռք է բերում անհամեմատ լայն իմաստ ու բովանդակություն և, ըստ էության, ա-

ընդհատ գործընթաց է, քանի որ անգամ օրենսդրության կատարյալ անփոփոխ վիճակում կարող են արմատապես փոփոխվել վերջինիս դրույթների վերաբերյալ պատկերացումները, կիրառման եղանակներն ու սահմանները, որոնք, մեր կարծիքով, ևս - լայն իմաստով ներառվում են հիշյալ եզրույթի բովանդակության մեջ:

Դասական իմաստով իրավաստեղծ գործունեության ձևական ընթացակարգերը սոսկ միտված են որոշակի կանոններով իրավական ակտերի ընդունմանը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարմանը, մինչդեռ իրավագիտակցության մեջ բուն իրավաստեղծ գործունեությունն սկսվում է հիշյալ ձևական ընթացակարգերից շատ առաջ և շարունակվում է դրանց ավարտից հետո, ինչի արդյունքում էլ իրավական նորմերը, մնալով անփոփոխ, ուղեկցվում են ժողովրդավարության զարգացումներին համահունչ նոր ընկալումներով: Բուն իրավաստեղծ գործունեությունը կարող է իրատեսական լինել և նախաձեռնվել միայն այն դեպքում, երբ դրա հաջողությունը երաշխավորելու համար ձևավորվել են համարժեք իրավական մշակույթի անհրաժեշտ սաղմեր:

5. Նպատակահարմար է արմատապես վերանայել համամարդկային արժեքների ձևավորման ու զարգացման գործընթացները՝ զերծ մնալով բացառապես որոշ տարածաշրջաններում կայացած իրավական համակարգերը հենք ընդունելու միտումից: Այդպիսի զգուշավոր քաղաքականությունը, մի կողմից, բարդացնում է հիրավի համամարդկային բազմաթիվ պիտանի արժեքներ համամասնորեն հետազոտելու և ներդնելու գործընթացը, մյուս կողմից՝ խոցելի է դարձնում ժողովրդավարության հարուստ փորձ ունեցող երկրների իրավական մշակույթի նկատմամբ առանց այդ էլ նվազ վստահությունը:

6. Իրավունքի գերակայության պարագայում օրինականության սկզբունքի մեկնաբանությունն անխուսափելիորեն առնչվում է լրացուցիչ այնպիսի հարցադրումներին, ինչպիսիք են բուն օրենքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև օրենքների կատարման երաշխավորվածությունը: Այլ կերպ ասած, իրավունքի գերակայության տեսանկյունից օրինականության սկզբունքին կարող է տրվել հետևյալ բնորոշումը. *Օրինականությունը ժողովրդավարության, քաղաքակրթության, մարդու բնական իրավունքներին և իրավունքի միջազգային չափանիշներին համահունչ օրենքներ և այլ իրավական ակտեր ընդունելու, դրանց անշեղ կատարման, ինչպես նաև կատարման համար անհրաժեշտ իրավակազմակերպական երաշխիքների պահանջն է*: Իրավունքի գերակայության պարագայում չի կարող ցանկացած օրենքի անշեղ կատարման պահանջը գնահատվել իբրև օրինականություն, քանզի իրավունքի սկզբունքներին ակնհայտ հակասող և մարդու բնական իրավունքներն անտեսող օրենքների կատարման պահանջն ինքնին կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին:

7. Իրավական մշակույթի բնույթի, մասնավորապես դրա կայունության և հուսալիության ցուցիչներից է, այսպես կոչված, սահմանագծային արարքների (խոսքն այնպիսի արարքների մասին է, որոնք թեպետ տվյալ երկրի օրենսդրությամբ չեն համարվում իրավախախտում, սակայն միջազգային փորձը և, հատկապես, բարոյական իրավունքը բացասական վերաբերմունք ունեն) առնչությամբ ձևավորված հասարակական ինքնագիտակցության բնույթը: Մասնավորապես, կարծում ենք, այդպիսի արարքների նկատմամբ բարոյական իրավունքի չեզոքությունը կարող է գնահատվել որպես իրա-

վական մշակույթի խոցելիության, անկատարության ցուցիչ: Տվյալ դեպքում, ենթադրվում է, որ բարոյական նորմերի պահանջները պետք է որոշակի իմաստով գերազանցեն իրավունքի նորմերով ամրագրված պահանջները, ինչը, այսպիսով, բնավ իրավական նիհիլիզմի բնութագրիչ համարվել չի կարող:

8. Արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների, ակնհայտ ագրեսիվ քարոզչության ու միջազգային կապերի խորացման պայմաններում իրավական մշակույթի ձևավորման գործընթացը թելադրված է ոչ միայն, իսկ երբեմն՝ ոչ այնքան ազգային պետական քաղաքականությամբ, որքան արտաքին գործոնների ազդեցությամբ, ինչով էլ բացատրվում է, օրինակ, «բրեյվիկյան» հայտանիշը (սիմպտոմը) և նմանաբնույթ այլ երևույթներ: Ըստ այդմ էլ պետական քաղաքականության մեջ հարկ է համարժեքորեն հաշվի առնել արտաքին բացասական ազդեցությունը հնարավորինս մեղմելու խնդիրը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և մասնավոր (հատուկ) մեթոդները ու եղանակները: Հիմք ընդունելով այն փաստարկը, որ ատենախոսությունում անհրաժեշտություն է առաջացել հիմնավորված տեսական կանխորոշումներ անելու նպատակով վերլուծել ոչ միայն հայրենական իրավական մշակույթը, ներպետական իրավական համակարգը, այլև միջազգային իրավական չափանիշները, ինչպես նաև պատմական երկարատև փորձարկում անցած ինստիտուտները, ատենախոսությունում հնարավորինս համամասնորեն կիրառվել են հետազոտության ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդներ: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են տարբեր հետազոտական մեթոդներ, մասնավորապես, իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծվել են մեր երկրի և օտարերկրյա պետությունների ու միջազգային կառույցների իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ առաջադրված ընդհանուր լուծումները, առանձնահատկությունները և այլն:

Հետազոտության աղբյուրագիտական և նորմատիվաիրավական հենքը: Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են կազմում հայ իրավական հուշարձանները, հայ սովորութային իրավունքը, խորհրդային իրավաստեղծ գործունեությունը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը: Միաժամանակ, հետազոտության նորմատիվաիրավական հենքն են կազմում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, անկախության փուլում ընդունված իրավական ակտերը, սահմանադրական դատարանի որոշումները, միջազգային պայմանագրերը, միջազգային դատական ատյանների դատական ակտերը և այլն:

Վերլուծությունների հիմքում դրված են ինչպես վերջին տարիներին մշակված ու դեռևս քննարկման փուլում գտնվող, այնպես էլ տարաբնույթ պատճառաբանություններով մերժված օրինագծերը: Որոշ դեպքերում ուսումնասիրվել են նաև օրինագծերի առնչությամբ պատրաստված պաշտոնական գրագրությունները (հիմնավորումները, պաշտոնական կարծիքները), միջազգային փորձագետների եզրակացությունները և այլն:

Լայնորեն կիրառվել են իրավաստեղծ գործունեության եղանակներին ու չափանիշներին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերը և միջազգային դատական ատյանների դատական ակտերը և այլն:

Հետազոտության գիտագործնական նշանակությունը: Իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման արդիական հարցադրումների վերաբերյալ տեսական հետազոտությունը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գիտական չափանիշ-

ներով վերահիմաստավորելու իրավական այդ երևույթների նկատմամբ պատկերացումները, առաջադրելու դրանց հետազոտության միանգամայն նոր տեսանկյունից բխող չափանիշներ ու եղանակներ: Հետազոտության արդյունքները հավասարապես կարող են օգտակար լինել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ պրակտիկ գործունեության մեջ, մասնավորապես հնարավորություն կտան այդ ոլորտներում կատարելու առավել ազդեցիկ ու կանխատեսելի շեշտադրումներ:

Աշխատության գիտագործնական նշանակությունն ընդգծվում է հետագա իրավական բարեփոխումների ուղղությունները և եղանակները որոշ չափանիշներով վերանայելու և դրանք առավել իրատեսական ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ կոնկրետ եզրահանգումների առաջադրմամբ: Որոշ եզրահանգումներ բխում են վարչարարության և դատաիրավական բարեփոխումների կոնկրետ հարցադրումներով գիտական հետազոտությունների արդյունքներից և կարող են արժեքավոր լինել այդ համակարգերի գործունեության արդյունավետությունը գնահատելու հարցադրումներով մշտադիտարկումներ (մոնիտորինգներ) իրականացնելու համար համապատասխան մեթոդական ցուցումներ պատրաստելու և կիրառելու տեսանկյունից:

Աշխատության գիտագործնական նշանակությունը փոխպայմանավորված է նաև ինքնուրույն ազգային իրավական համակարգի ձևավորման ու դրա՝ բացառապես մեր երկրի առանձնահատկություններին և արդեն իսկ ձևավորված իրավական համակարգին համահունչ իրավական ինստիտուտներով ու իրավական լուծումներով հարստացման անհրաժեշտությամբ:

Կարծում ենք, ատենախոսությունում արտացոլված առանձին տեսակետներ կարող են պիտանի լինել օրենսդիր իշխանության, վարչարարության, դատական համակարգի, դատական տարբեր ատյանների դատազորությունների վերանայման, դրանց բարելավման խնդիրների գիտագործնական քննարկումների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը և արժանահավատությունը: Նկատի ունենալով ընտրված հարցադրումների միջճյուղային բնույթը (ինչպես արդեն ասվեց, դրանք նվազագույնն առնչվում են հոգեբանական և փիլիսոփայական հայեցակետերին), ատենախոսությունում արտացոլված հետազոտության արդյունքները փորձել ենք հիմնավորել սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների ենթատեքստում իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան երկրների համապատասխան իրավական ինստիտուտների ձևավորման և իրավական կարգավորման փորձի գիտական համակողմանի ու անաչառ վերլուծության արդյունքներով, ինչպես նաև հիմնավորել և փաստարկել պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների գործունեության ու դատական պրակտիկայի համապատասխան նյութերով:

Զգալի տեղ է հատկացվել սոցիոլոգիական հետազոտություններին, մասնավորապես այդ նպատակով իրականացված հարցումներին, որոնք կազմակերպվել են ինչպես իրավագետների, այնպես էլ ոչ մասնագետների շրջանում:

Առանձին եզրահանգումների համար հիմք են հանդիսացել միջազգային հանրաճանաչ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հա-

յաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայք-էջերում զետեղված նյութերը և այդ մարմինների արխիվային նյութերը:

Հաշվի առնելով հետազոտության համար ընտրված հարցադրումների համամարդկային նշանակությունը, համապատասխան իրավահամեմատական վերլուծություն իրականացնելու ակնկալիքով, հետազոտվել են նաև առաջավոր փորձ կուտակած արտասահմանյան երկրների իրավասու կառույցների գործունեության արդյունքները:

Հեղինակն օգտագործել է նաև Վիեննայի պետական համալսարանի մագիստրատուրայում 2008-2009թթ. ուսումնառության ընթացքում ձեռք բերված՝ գիտագործնական նշանակություն ունեցող աղբյուրները, ինչպես նաև իր կողմից կատարված հետազոտության արդյունքները:

Ուսումնասիրության արդյունքների ներդրումն ու փորձարկումը: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 5 գիտական հոդվածներում: Դրանց առավել առանցքային նշանակություն ունեցող մասերը ներկայացվել են Հայաստանի Հանրապետության դատախազությունում կազմակերպված գիտաժողովներում: Աշխատության հիմնական եզրահանգումներն ամփոփ տեսքով ուղարկվել են մեր երկրում գործող մի շարք միջազգային կազմակերպությունների, որոնք հայտնել են մեր երկրում իրավական համակարգի բարելավման և կատարելագործման խնդիրների բարեհաջող լուծման հեռանկարով շահագրգիռ լինելու և հնարավորինս այդ խնդիրների լուծմանը նպաստելու մասին:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ ու ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (դրանք ընդհանուր հաշվով ներառում են 9 պարագրաֆ) և եզրափակիչ մասից: Կցված է նաև օգտագործված գրականության ցանկը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, ներկայացված է հետազոտության գիտագործնական նշանակությունը, առաջադրված են պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները, նշված են փորձարկման արդյունքները:

Աշխատանքի ***առաջին գլուխը*** (Իրավական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական նախադրյալները և առավել էական հիմնախնդիրները*)* բաղկացած է 3 պարագրաֆից: ***Առաջին պարագրաֆում*** («Իրավական մշակույթ» և «իրավագիտակցություն» հասկացությունների արդի գիտական ընկալումները և դրանց որոշ տարրերի վերաիմաստավորման անհրաժեշտությունը) բացահայտված են հիշյալ եզրույթների այն տարրերը, որոնք ներկայումս վերաիմաստավորման կարիք ունեն: Միաժամանակ, հստակ ներկայացված են վերաիմաստավորման հիմքերն ու ուղղությունները: Իրավական մշակույթի և իրավագիտակցության վերաիմաստավորման, այդ իրավական

երևույթների վրա ներգդելու ունակ գործոնների այժմեական բնութագրիչների վերաբերյալ պատկերացումների վերանայման անհրաժեշտությունը բխում է ինչպես ներպետական, ազգային, այնպես էլ՝ միջազգային բազմապիսի նոր իրադարձությունների ու գործոնների փաստացի ազդեցությունից, որոնց վերաբերյալ համակողմանի գիտագործնական հետազոտությունները կարող են նպաստել դրանք հնարավորինս կառավարելի ու դրանց հետևանքները կանխատեսելի դարձնելու տեսանկյունից:

Ընտենախոսությունում վերլուծվել են նաև այդ եզրույթների վերաիմաստավորման արտասահմանյան իրավագետների ու տեսաբանների առանձին փորձերը, իսկ արդյունքները համադրվել են հեղինակի եզրահանգումների հետ:

Հետազոտության նպատակը դրանց վերանայման միջոցով այդ իրավական ինստիտուտների ձևավորման ու կայացման, դրանց բովանդակությունը կանխորոշող ժամանակակից գործոնների շրջանակի հստակեցումն ու հենց այդ ինստիտուտների ազդեցության բնույթի ու հետևանքների համակողմանի բացահայտումն է:

Երկրորդ պարագրաֆը (Իրավական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական նախադրյալները, դրանց իմացաբանական նշանակությունը) նվիրված է իրավական մշակույթի ձևավորման պամքաղաքական նախադրյալների հետազոտությանը: Հեղինակը հնարավորինս սպառիչ անդրադարձել է հիշյալ նախադրյալներին և փորձել է ցույց տալ դրանց դերն ու արտացոլումը ներկայումս ձևավորված իրավական մշակույթի համակարգում:

Աշխատության այս հատվածում ընդգծվում է, որ պատմաքաղաքական նշանակություն ունեցող նախադրյալները դեռևս չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը և որոշ չափով կանխորոշում են իրավական մշակույթի ձևավորման ու զարգացման արդի նախադրյալները:

Աշխատությունում, մասնավորապես, հանգամանորեն քննարկվել են այնպիսի նախադրյալներ, ինչպիսիք են՝ ա) տևական ժամանակով պետական բացակայությունը, բ) գաղութատիրության պայմաններում հանցավորության և այլ իրավախախտումների դեմ տարվող պայքարի առանձնահատկությունները, գ) սովորութային իրավունքի զարգացվածության բարձր մակարդակը և կիրառելիության լայն շրջանակները, դ) *իրավական մակույթի և իրավագիտակցության ձևավորման նախադրյալների համակարգում Հայ Առաքելական եկեղեցու արժեքավոր դերը:* Ընդհանրապես, եկեղեցին օժտված է եղել իրենց էությամբ ու բնույթով զուտ ետական բազմաթիվ գործառույթներ իրականացնելու լայն լիազորություններով (դատավարություն, պատիժների կատարում, գործարքների, քաղաքացիական կացության ակտերի վավերացում և այլն), որոնք աստիճանաբար փոխանցվել են իրավասու պետական կառույցներին, ե) իրավունքի պատմական մեծարժեք աղբյուրների գոյությունը, զ) խորհրդային իրավագիտակցության ու մտածելակերպի բռնապետական տարրերը, որոնք բնավ հաղթահարված չեն:

Այսպիսով, իրավական մշակույթի պատմաքաղաքական նախադրյալների համակարգը ներառում է այնպիսի գործոններ, որոնք միաժամանակ ունակ են առաջացնելու ոչ միայն դրական, ցանկալի, այլև խիստ բացասական ազդակներ, ինչը վկայում է այն մասին, որ դրանց ազդեցության ընդհանուր պատկերը բնավ չի հանդիսանում այդ գործոնների արհեստական պատճենահանումը: Նշված նախադրյալները ստեղծում են ո-

ոշակի բնույթի իրավական մշակույթ ձևավորելու առավել մեծ հավանականություն, սակայն կոնկրետ արդյունքները պայմանավորված են արդեն իրավական քաղաքականություն ձևավորելու գործընթացի պատասխանատուների գործելաոճով:

Ըստ հեղինակի, հարկ է ուշադրության կենտրոնում պահել այն, որ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման փուլերը, հատկապես, ժամանակագրական կտրվածքով, բնավ չեն համապատասխանում իրավական բարեփոխումների զարգացման, ձևավորման փուլերին, միաժամանակ աշխատությունում բացահայտվել են շեղումները և դրանց դրսևորումները:

Երրորդ պարագրաֆում (Իրավական մշակույթի ձևավորման արդի նախադրյալները և հրատապ հիմնախնդիրները) հեղինակն անդրադարձել է ոչ միայն իրավական մշակույթի արդի նախադրյալներին, այլև բացահայտել է դրանց և պատմաքաղաքական նախադրյալների միջև առկա փոխադարձ կապը: Ընդ որում, հեղինակը, չհամաձայնվելով հիշյալ նախադրյալների էության, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական նշանակության վերաբերյալ ներկայումս ձևավորված առանձին մոտեցումների հետ, փորձել է ներկայացնել ինքնուրույն եզրահանգումներ:

Ինչևէ, աշխատությունում առաջադրված են հետևյալ արդի նախադրյալները՝ ա) հայրենական իրավական մշակույթը ձեռք է բերել կիսաբաց բնույթ և հակված է այլ իրավական մշակույթի տարրերի ներմուծմանը, բ) աստիճանաբար նշանակալից է դառնում քաղաքացիական հասարակության ինստիտուտների ազդեցությունը գ) խղճի ազատության պայմաններում գրեթե անխուսափելի են դառնում կրոնական այնպիսի աղանդները, որոնք իրենց գործունեությամբ պարզապես համահունչ չեն համամարդկային արժեքներին ու Սահմանադրության հիմնարար դրույթներին, դ) քաղաքական արմատական հեղաշրջումներից հետո անխուսափելիորեն ծագող սոցիալ-տնտեսական ու զուտ հոգեբանական բարդությունները, որոնք բացասական մեծ ազդեցություն են ունենում մարդկանց ընդհանուր գիտակցության վրա, նպաստավոր պայմաններ ստեղծելով դեպրեսիաների ու նմանաբնույթ այլ հոգեբանական անցանկալի երևույթների համար, ե) իրավական մշակույթի ձևավորման կարևոր գործոններից է տարածաշրջանային բարդ իրավիճակը, որն ուղեկցվում է մեր երկրի շրջափակմամբ, ռազմական բախումների սպառնալիքի առկայությամբ և միջազգային համագործակցության դեռևս խոցելի դրսևորումներով, զ) ինքնուրույն իրավական ու պետական համակարգի կայացման ու զարգացման խնդիրներին համահունչ իրավական մշակույթ ձևավորելու անհրաժեշտությունը, է) օրենսդրության իմացության հարցերում հանրության, ըստ էության, նոր որակի իրազեկվածությունը, ը) պետական քաղաքականության առանցքային խնդիրների լուծման առնչությամբ կանխատեսելի, կայուն իրավական լուծումների բացակայությունը, ինչի արդյունքում անհարկի տարածում են ստացել օրենսդրական ակտարերում ոչ միայն հաճախակի կատարվող, այլև միմյանց ժխտող փոփոխություններն ու լրացումները և այլն:

Աշխատության այս հատվածում ներկայացվել է հետևյալ եզրահանգումը՝ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման ներկայիս խնդիրների բարեհաջող լուծումը փոխկապակցված է այդ գործընթացը կանխորոշող, դրա վրա էական ազդեցություն ունեցող նախադրյալների, սոցիալ-քաղաքական, հոգեբանական և իրավա-

կան գործոնների համարժեք ընկալման ու դրանց ճշգրիտ կիրառական նշանակության ու դրսևորումների բացահայտման հետ:

Այդ նախադրյալների մի գերակշիռ մասը գործել է նաև խորհրդային իրավական համակարգում, իսկ մի մասն էլ ավելի վաղ անցյալից է գալիս, սակայն դրանք բոլորն էլ ներկայումս ձեռք են բերել այնպիսի որակներ, որոնք հաճախ էապես փոխում են դրանց նախնական բնույթն ու արժեքը: Որքան իրավունքի տեսությանը հասու են լինում դրանց իրավական բնույթին առնչվող հարցադրումները, այնքան առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում նշված իրավական երևույթներն արդյունավետ ու նպատակասլաց կիրառելու տեսանկյունից:

Աշխատանքի ***երկրորդ գլուխը*** (Իրավական մշակույթի զարգացման միտումները և դրանք ուղղորդող գործոնները) բաղկացած է 3 պարագրաֆից: ***Առաջին պարագրաֆում*** (Իրավական մշակույթի զարգացման գերակա ուղղությունները) համակարգված ներկայացվել է իր պատկերացմամբ ու գիտական հիմնավորումներով ուղեկցվող իրավական մշակույթի զարգացման միտումներն ու դրանք ուղղորդող գործոնները:

Հետազոտության արդյունքներով ներկայացվել է հետևյալ եզրահանգումները՝ ա) ելակետ ընդունելով այն, որ իրավական մշակույթը միշտ չէ, որ համարժեք է արտացոլում պետահիրավական ողջ կառուցակարգային համակարգը, նպատակահարմար է հանրության իրավագիտակցությանը հասանելի դարձնել այն իրավական գաղափարները, սկզբունքներն ու նպատակները, որոնք հիրավի առավել կարևոր, առանցքային նշանակություն ունեն, հանդիսանում են հիմնարար և կանխորոշող, բ) հարկ է ընտրել իրավական մշակույթի բաղադրիչների (ինչպես, օրինակ, բարոյահոգեբանական մթնոլորտի) ձևավորման ազդակների, լծակների ու եղանակների առավել հիմնավորված համակարգ, մասնավորապես ձեռնպահ մնալ այնպիսի լուծումներից, որոնք, ըստ էության, չեն առնչվում այդ բաղադրիչների հետ, գ) պետական քաղաքականությունը կանխորոշող բոլոր ծրագրային փաստաթղթերում ու հայեցակարգերում նպատակահարմար է համարժեքորեն ներառել ոչ միայն օրենսդրության իրազեկվածության, այլև պատշաճ իրավագիտակցության ձևավորմանը նպաստող լծակներ, դ) հարկ է ձևավորել «առողջ իրավագիտակցության» նախադրյալներ, որոնք պայմանավորված են բացառապես ինքնագիտակցության բարձր մակարդակով և ե) հանրությանը մեծապես հուզող հարցերի պարագայում պետական իրավասու մարմինները չպետք է դրսևորեն առանձնակի «հոգածություն» և փորձեն ամբողջովին ստանձնել այնպիսի խնդիրների լուծման պարտավորությունը, որոնք ի սկզբանե չեն վերաբերում իրենց կարգավիճակին:

Ատենախոսության այս հատվածում հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի հարկ է հրաժարվել դասական եղանակներով օրենսդրության իրազեկվածության գործընթացներից: Ըստ հեղինակի, այդ եղանակն իրեն սպառել է մի քանի պատճառներով՝ ա) իրավաստեղծ գործունեությունն աննախադեպ մեծ ծավալներ է ընդգրկում, բ) դեռևս չի հաղթահարվել միմյանց հակասող, ինչպես նաև բավարար հստակություն չապահովող իրավական ակտերը, որոնց հետ սոսկ ծանոթացումը կարող է թյուր կարծիքների տեղիք տալ, գ) իրավական ակտերի փաստաթղթային տարբերակները հասանելի դարձնելը կարող է անհարկի, չարդարացնող մեծ ծախսերի պատճառ դառնալ և այլն: Առաջարկվում է շեշտադրում անել իրավական փաստաթղթերի մատչելիությանը՝ հիմ-

նականում էլեկտրոնային եղանակով: Միաժամանակ, առաջարկվում է հնարավորինս պարբերաբար մշակել և շրջանառության մեջ դնել իրավական հրատապ խնդիրների մեկնաբանությանն ու իրավակիրառ բարդությունների հաղթահարմանը նվիրված ձեռնարկներ: Ընդ որում, ըստ հեղինակի, այդպիսի ձեռնարկները, հատկապես, անհրաժեշտ են սոցիալապես թույլ պաշտպանված կամ խոցելի կարգավիճակում գտնվող մարդկանց (հաշմանդամներ, հղի կանայք, ծնողազուրկ անչափահասներ, դատապարտյալներ և այլն) համար:

Ազգային իրավական մշակույթի զարգացման ուղիների, ինչպես նաև եղանակների առնչությամբ մեր երկրում առկա են լուրջ հիմնախնդիրներ, մասնավորապես այս հարցադրումները չեն դարձել պետական քաղաքականության պատշաճ թիրախ: Կարևոր է նաև ընդգծել, որ ընդհանուր առմամբ, պետական քաղաքականությունն արտացոլող պաշտոնական ծրագրային փաստաթղթերում համարժեք արտացոլելով գերակա խնդիրները, այնուամենայնիվ, դրանք գործնականում միշտ չէ, որ իրականում ունեն փաստացի առանցքային նշանակություն:

Երկրորդ պարագրաֆը (Իրավունքի սկզբունքների դերն իրավական մշակույթի զարգացման գործընթացում) հատուկ նվիրված է իրավական մշակույթի ձևավորման գործում իրավունքի սկզբունքների առանցքային նշանակության բացահայտմանը: Հեղինակը, իր եզրահանգումներն առավել առարկայական ներկայացնելու նկատառումով անդրադարձել է մի շարք հանրաճանաչ սկզբունքների կիրառական նշանակությանը, բացահայտել է իրավագիտակցության վրա դրանց ազդելու ուղղությունները և այլն:

Բացի այդ, աշխատությունում առանձնացված են մի շարք դատողություններ, որոնք միտված են հիշյալ տեսանկյունով իրավունքի սկզբունքների նշանակության բացահայտմանը՝ ա) իրավակիրառ պրակտիկայում դեռևս չի ձևավորվել սկզբունքների անմիջական կիրառման մշակույթ, բ) սկզբունքների նկատմամբ ձևավորվել է ակնհայտ թերահավատ վերաբերմունք նաև այն անձանց մոտ, ովքեր փորձում են վարչական կամ դատական կարգով պաշտպանել իրենց խախտված իրավունքները, գ) գերիշխում է այն թյուր մտայնությունը, ըստ որի սկզբունքները չունեն անմիջական կիրառման իրավական հատկություն, դ) ներկա ժամանակաշրջանն առանձնանում է աննախադեպ հարափոփոխ գործընթացներով, ինչը չի շրջանցում նաև իրավաստեղծ գործունեությունը և այլն:

Գիտահետազոտական վերլուծությունները բերում են այն համոզման, որ իրավունքի սկզբունքներն առավել նկատելի ճանաչողականություն են ձեռք բերում հատկապես հասարակության զարգացման արմատական վերափոխումների փուլում, ինչը վկայում է այն մասին, որ, այնուամենայնիվ, սկզբունքների նկատմամբ կարող է ձևավորվել համարժեք վերաբերմունք՝ իր բոլոր դրական հետևանքներով հանդերձ:

Մեր ժամանակներում իրավական մշակույթի ներքին բովանդակությունը, կարծում ենք, հիմնականում թելադրված է այնպիսի հիմնարար ու սկզբունքների բովանդակությունը կանծորոշող տեսություններով, ինչպիսին է բնական իրավունքը: Այս տեսությունը, թերևս, այլ ձևակերպումներով, ըստ էության, արտացոլված է եղել մարդկության իրավական և փիլիսոփայական մտքի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Այսպես, բովանդակային կտրվածքով այդ գաղափարն է հաստատվել սոփեստների «բնութ-

յամբ արդարադատ» հայեցակարգում, «Ամբողջի ներդաշնակության» անհրաժեշտությամբ թելադրված յուրաքանչյուրի կողմից իրեն վերապահված կոչումին համապատասխան գործելու վերաբերյալ Պլատոնի տեսությամբ և այլն: Բնական իրավունքն սկզբունքային նոր որակի հասցրեց Ջոն Լոքը՝ շրջանառության մեջ դնելով մարդու անօտարելի իրավունքների՝ ազատության, հավասարության ւ սեփականության ուսմունքը [2]:

Երրորդ պարագրաֆը (Իրավական մշակույթը միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխհարաբերության համատեքստում) նվիրված է միջազգային և ազգային իրավունքի փոխհարաբերության համատեքստում իրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրներին: Աշխատությունում այն միտքն է արտահայտվել, ըստ որի՝ միջազգային իրավունքի ազդեցությունը բնավ միայն միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխան ազգային օրենսդրություն ձևավորելու եղանակով չէ իրականացվում: Ներկայիս գլոբալիզացիայի պայմաններում տարածաշրջանային, կրոնական, էթնիկական ու նմանաբնույթ այլ հիմքերով թելադրված առանձնահատուկ իրավական համակարգ ունեցող բազմաթիվ երկրներ փորձում են ձևավորել այնպիսի ազգային օրենսդրություն ու պետական համակարգ, որը ոչ թե միտված է միջազգային չափանիշների գերակայության ապահովմանը, այլ՝ հենց նույն միջազգային իրավունքին հնարավորինս «հուսալի» դիմակայելուն:

Ներկա քաղաքական ու իրավական զարգացումները վկայում են այն մասին, որ հիշյալ երկրների իրավական մշակույթը, ըստ էության, հակված լինելով ժխտելու արմտյան իրավական մշակույթը, այնուամենայնիվ, այս կամ այն չափով դրսևորում է հանդուրժողականություն, ինչը գնահատվում է, որպես միջազգային հարաբերություններում ծայրահեղ մեկուսացվածության չենթարկվելու, և դրանով պայմանավորված բացասական հետևանքները հաղթահարել չկարողանալու մտավախությամբ:

Աշխատությունում բացահայտվել են միջազգային իրավունքի նկատմամբ առանձին իրավական համակարգի ներկայացուցիչների մտավախության ու անվստահության սոցիալ-հոգեբանական խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման առավել արդյունավետ ուղիները:

Միաժամանակ, աշխատությունում անդրադարձ է արվել այն հարցադրմանը, որ արևմտյան Եվրոպայի հեղինակությամբ միջազգային իրավունքը դեռևս չի ապահովել այնպիսի ընթացակարգեր, որոնք կբացառեին այդ իրավական համակարգի նկատմամբ անվստահություն ծնող իրավական մշակույթը: Ընդ որում, իր եզրահանգումները հիմնավորելու նկատառումով ներկայացված են այդ խնդրի առնչությամբ ասիական մի շարք երկրների քաղաքական պատասխանատու գործիչների ու իրավագետների տեսակետները, օրենսդրական ակտերը և այլն:

Աշխատանքի ***երրորդ գլուխը*** (Իրավագիտակցության և իրավական մշակույթի ազդեցության դրսևորումներն ու գիտագործնական նշանակությունը) բաղկացած է 3 պարագրաֆից: ***Առաջին պարագրաֆը*** (Իրավագիտակցության և իրավական մշակույթի ազդեցությունն իրավաստեղծ գործունեության վրա) նվիրված է իրավաստեղծ գոր-

[2] Այս հարցի առնչությամբ առավել հանգամանալից վերլուծություններ կան Վ.Ժուկովի հետևյալ աշխատությունում. Жуков В.Н., Философия права (Теоретико-методологический аспект) // Гос. и право, 2009, № 3, с. 21-32.

ծունեության նկատմամբ իրավական մշակույթի ունեցած ազդեցության խնդիրների հետազոտմանը: Աշխատությունում իրավաստեղծ գործունեությունը գնահատվում է, որպես իրավական մշակույթի հետ փոխադարձ կապ ունեցող իրավական երևույթ, որը ոչ միայն կանխորոշում է իրավական մշակույթի բովանդակությունը, այլև ազդում է վերջինիս ձևավորման ու զարգացման գործընթացների վրա:

Հիշյալ փոխհարաբերության առնչությամբ աշխատությունում առաջ են քաշված ետևյալ եզրահանգումները՝ ա) իրավական նշանակություն ունեցող առանձին հարցադրումների առնչությամբ հասարակական կարծիքը պարզապես ի զորու չէ լիարժեք համահունչ ու համաչափ լինել, բ) ներկայումս իրավաստեղծ գործունեությունը միտված է, այսպես կոչված, կոռուպցիոն ռիսկերի նազեցմանը, ինչն ինքնին ողջունելի երևույթ է, սակայն մեր համոզմամբ առանձին իրավական լծակների առնչությամբ ձևավորված իրավական մշակույթը, թերևս, համարժեք ու համալիր չի արտացոլում դրանց փաստացի սոցիալական նշանակությունը, գ) հաշվի առնելով, որ, այնուամենայնիվ, օրենսդրական ակտերում որոշ օտարածին տերմինների կիրառման անհրաժեշտությունը ժխտել հնարավոր չէ, հարկ է դրանք ուղեկցել համարժեք մեկնաբանություններով և իրավակիրառ պրակտիկայում ապահովել անհրաժեշտ միասնականություն, դ) իրավաստեղծ գործունեության նկատմամբ իրավական մշակույթի ազդեցության կարևոր հիմնախնդիրներից են իրավախախտումների (հատկապես զանգվածային բնույթ կրող) դեմ պայքարի իրավական կարգավորման քաղաքականությունում անհարկի ծայրահեղ դրսևորումները. ազգային իրավական մշակույթում դեռևս չեն ձևավորվել, հատկապես, զանգվածային իրավախախտումների նախականխման և բացահայտման անհրաժեշտ բաղադրիչներ, ե) իրավաստեղծ գործունեության հաջողության գրավական է համարվում իրավական մշակույթի այնպիսի վիճակը, երբ ընդունվող իրավական ակտը գոնե ընդհանուր գծերով համապատասխանում է հանրության տրամադրություններին, կամ առնվազն տեղիք չի տալիս սուր տարաձայնությունների և զ) իրավական մշակույթի ազդեցության հաջորդ դրսևորումը, թերևս, կապակցված է իրավաստեղծ գործունեությունը կադրային քաղաքականությանը ստորադասելու երևույթի հետ:

Իրավական մշակույթի համատեքստում իրավաստեղծ գործունեությունը, ըստ հեղինակի, ձեռք է բերում նոր նշանակություն և իմաստ. խնդիրն այն, որ ձևական, ընթացակարգային կտրվածքով իրավաստեղծ գործունեությունը չի առնչվում հասարակական ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ, քանի դեռ դրանք պաշտոնական շրջանառության համար որևէ կերպ չեն արտացոլվել, մինչդեռ՝ օրենսդրության անգամ տևական ժամանակով անփոփոխ լինելու դեպքում, իրավաստեղծ գործունեությունը, թերևս, սկսվում է ակտիվ փուլ թևակոխել շնորհիվ իրավական նորմերի բովանդակության, դրանց մեկնաբանության առնչությամբ իրավագիտակցության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում: Խնդիրն այն է, որ միևնույն իրավական նորմը, այդպիսով, ձեռք է բերում բոլորովին այլ իրավական իմաստ ու իրավակիրառ այլ դրսևորումներ:

Աշխատությունում այն տեսակետն է զարգացվում, ըստ որի՝ հարկ է էապես բարձրացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներդրման միջոցով հանրային քննարկումների շրջանակներն ու բարելավել որակը: Մասնավորապես, այս

հարցում ձևական մոտեցումները կարող են հակառակ ազդեցությունն ունենալ: Այսպիսով, հնարավորինս արդյունավետ և միջազգային չափանիշներին համահունչ իրավաստեղծ գործունեություն իրականացնելու համար նախընտրելի իրավական մշակույթ ձևավորելու համար հարկ է արմատապես վերանայել որոշ այնպիսի իրավական պատկերացումներ, որոնք վճռորոշ նշանակություն ունեն ողջ իրավական և պետական համակարգի բարելավման տեսանկյունից:

Երկրորդ պարագրաֆում (Օրինականության և իրավակարգի պահպանման հիմնախնդիրները և իրավական մշակույթը) հետազոտված են օրինականության և իրավակարգի պահպանման գործընթացների վրա իրավական մշակույթի ազեցության դրսևորումները և սոցիալ-հոգեբանական խնդիրները: Ընդ որում, ատենախոսությունում հիմք է ընդունվել օրինականության սկզբունքի ոչ թե դասական բնորոշումը, այլ փորձ է արվել ներկայացնելու միանգամայն նոր բնորոշում, որում համարժեք անդրադարձ կա օրինականության, որպես իրավունքի գերակայությամբ պայմանավորված իրավական ակտերի ընդունման, դրանց կատարման պահանջի և երաշխիքի միասնականություն:

Ատենախոսությունում օրինականության սկզբունքի և իրավական մշակույթի փոխհարաբերության առնչությամբ ներկայացված են որոշակի դատողություններ՝ ա) երկրում օրինականության և իրավակարգի ամրապնդման պատասխանատուն բացառապես իշխանություններն են, որոնք, սակայն ծայրահեղ անբարեխիղճ են իրենց առջև դրված խնդիրը լուծելու գործում և ներքաշված են կոռուպցիայի մեջ, բ) իրավական համակարգը գրեթե զրկված է ինքնուրույն զարգանալու ունակությունից և կախվածության մեջ է միջազգային գործընթացներից, գ) երկրում առկա կայունությունը պայմանավորված է ոչ թե իշխանությունների տարանջատման ու հակակշռելիության սկզբունքի պահպանմամբ, այլ՝ գործադիր կենտրոնացված իշխանության անհարկի գերազդեցությամբ և դ) հաջողության գրավականը ոչ այնքան իրավաչափ կենսառճն է, որքան՝ վարչարարության ոլորտում կոռուպցիոն բնույթի ակնկալիքներին համահունչ գործելը:

Անդրադառնալով օրինականության և իրավակարգի ամրապնդման ռազմավարության սոցիալ-հոգեբանական խնդիրներին, աշխատությունում առանձնացվել են հետևյալ ասպեկտները՝ ա) հարկ է ծրագրի կառուցման հիմքում դնել այնպիսի միջոցառումներ, որոնք անխուսափելի կդարձնեն հանրության մասնակցությունը հանցավորության և իրավախախտումների դեմ պայքարին, բ) էական նշանակություն ունի գործադիր իշխանության մարմինների առօրյա գործունեությունում, այդ թվում՝ դատական իշխանությանն առնչվող օրենսդրական ակտերը տարբեր ատյաններում, այդ թվում՝ Ազգային ժողովում քննարկման ներկայացնելիս, այնպիսի գործելաոճ ու պահվածք ընդունելը, որ բացարձակապես կասկած չհարուցի առ այն, որ գործադիր իշխանությունը ակնհայտ մեկուսի, առանց դատական իշխանության ներկայացուցիչների անհրաժեշտ մասնակցության, որոշում է դատական իշխանությանն առնչվող օրենսդրական կարգավորումների ցանկացած հարց, գ) վարչարարության ոլորտում հարկ է ներդնել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կբացառեն իրավունքի անբարեխիղճ սուբյեկտների նկատմամբ անհարկի արտոնյալ կարգավիճակ սահմանելը և դ) հանցավորության դեմ պայքարի և օրինականության ամրապնդման տեսանկյունից

համարժեք ռազմավարություն ընտրելու հաջորդ ցուցիչը վերաբերում է կոռուպցիոն երևույթների դեմ պայքարում դեռևս խորհրդային իրավագիտակցության չափանիշների անհարկի գերակայությանը:

Ամփոփելով, օրինականության սկզբունքի և իրավական մշակույթի փոխհարաբերության վերաբերյալ հետազոտությունը, նկատենք, որ հաճախ այս կամ այն իրավական ինստիտուտի կամ առանձին հասկացության ու դրույթի վերաբերյալ մեր դիքորոշումը ոչ միայն հասարակության, այլև՝ մասնագետների իրավագիտակցության հարթությունում թելադրված է տվյալ պահին առավել գերակա պատկերացումներով: Կարծում ենք, որ տվյալ դեպքում ոչ թե ժխտողական վերաբերմունքն է խոչընդոտում օրինականության սկզբունքի առավել նախընտրելի մեկնաբանությունը շրջանառության մեջ դնելուն, այլ՝ այդ իրավական ինստիտուտի առավել նախընտրելի տարբերակի վերաբերյալ առկա թույլ իրազեկվածությունը:

Բոլոր դեպքերում, ատենախոսությունում այն միտքն է արտացոլված, որ օրինականությունը նպատակահարմար չէ ընկալել սոսկ օրենքների անվերապահ կատարման պահանջ, ինչը, ցավոք, տառացիորեն ամրագրված է բոլոր գործող օրենսդրական ակտերում: Աշխատությունում այն միտքն է հիմնավորված, ըստ որի օրինականության սկզբունքը կարող է առավել համարժեք լինել միայն այն դեպքում, երբ այն ուղեկցվում է առնվազն հետևյալ պահանջներով՝ ա) օրենսդրությունը համապատասխանում է համակեցության արդի չափանիշներին, մասնավորապես միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին, բ) ամրագրվում է հենց այդպիսի օրենքների անշեղ կատարման պահանջը, գ) ստեղծվում են օրենսդրության պահանջների կատարման համար անհրաժեշտ կազմակերպահիրավական երաշխիքներ:

Այս բնորոշման հիմքում դրվում է իրավունքի գերակայության սկզբունքը, ինչից բխում է, որ օրենքները կարող են իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ բավարարում են իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչներին: Ատենախոսությունում բերված են բազմաթիվ օրինակներ, որոնք հնարավորություն են տալիս համոզիչ դարձնելու վերը նշված մոտեցումները: Այսպես, օրինակ, խոսվում է այն մասին, որ հենց Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն չեն կարող կիրառվել Սահմանադրությանը և վավերացված միջազգային պայմանագրերին հակասող օրենքները:

Ընդ որում, օրինականության սկզբունքի պարզունակ պատկերացումները գործնականում հանգեցրել են այնպիսի իրավակիրառ պրակտիկայի, երբ անհարկի տարածված բնույթ է կրում միջազգային վավերացված պայմանագրերին հակասող օրենսդրական ակտերով ղեկավարվելու երևույթը: Ավելին, դատական պրակտիկայում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիային հակասող օրենսդրական ակտերով ղեկավարվելը դասական իմաստով չի դիտարկվում իբրև իրավախախտում. պատճառաբանությունն այն է, որ իբր դատարանը պարզապես ղեկավարվում է գործող օրենքով և ի զորու չէ գնահատելու դրա իրավաչափությունը, այդ թվում՝ սահմանադրականության տեսանկյունից:

Ատենախոսությունում այն տեսակետն է հիմնավորված, որ դատավորները գործնականում իրավական հնարավորություն ունեն պարզելու օրենսդրական ակտերի սահմանադրականությունը, պարզապես դեռևս չի ձևավորվել վիճահարույց դեպքերում սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտ պրակտիկա և իրավական մշա-

կույթ: Ինչ վերաբերում է նշված կոնվենցիային, ապա այս դեպքում դեռևս բավարար չափով չի ձևավորվել այդ միջազգային փաստաթղթին նվիրված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի համարժեք ուսումնասիրության և կիրառման փորձ:

Երրորդ պարագրաֆում (Իրավական մշակույթի ազդեցության այլ կարևոր դրսևորումները և դրանց շրջանակները), իրավական մշակույթի ազդեցության ոլորտներին առնչվող հարցերի հետազոտման համալիրությունն ապահովելու նկատառումով, անդրադարձ է արվել նաև այն առավել էական ոլորտներին, որոնք ևս գտնվում են փոխադարձ կապի մեջ իրավական մշակույթի հետ:

Իրավական մշակույթի ազդեցությունը բնավ չի սահմանափակվում միայն իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեությամբ, պարզապես վերջիններս էական նշանակություն ունեն իրավակարգի ու օրինականության ձևավորման տեսանկյունից: Սակայն գիտագործնական ասպեկտներով պակաս կարևոր չեն իրավական մշակույթի ազդեցության նաև այլ դրսևորումները, որոնցից առավել հիմնականներին կանդրադառնանք ատենախոսության սույն հատվածում:

Մասնավորապես, աշխատությունում հանգամանորեն քննարկվել է իրավական մշակույթի և քաղաքականության միջև փոխհարաբերության խնդիրը: Ինչ խոսք, քաղաքականության ճկունությունը թույլ է տալիս, որպեսզի որոշումներ կայացնելիս իսկապես ապահովվի անհրաժեշտ հայեցողություն, սակայն, նախ, չպետք է անտեսել, որ քաղաքականության բազմաթիվ հիմնահարցեր ևս իրավական կարգավորման առարկա են, բացի այդ, քաղաքականություն իրականացնողն ինքը պետք է խուսափի իրավական կարգավորման հարցերը, որպես զուտ քաղաքական հարցեր դիտարկելուց: Իհարկե, մասամբ նման իրավական մշակույթին նպաստում է քաղաքականության ոչ հարուստ փորձն ու իշխանության ձևավորման ու իրականացման բազմաթիվ հարցերի առնչությամբ իրավական կարգավորումների բացակայությունը:

Իրավական մշակույթի փոխազդեցության էական ոլորտներից է համարվում նաև հոգեկան մշակույթն իր բոլոր դրսևորումներով՝ արվեստ, գիտություն և այլն: Աշխատությունում բերվում են փաստարկներ վերը նշված ոլորտի և իրավական մշակույթի փոխազդեցության մինչ այժմ չհետազոտված հարցադրումների առնչությամբ: Իրավական մշակույթի այսպիսի դրսևորումները հղի են ազգային իրավագիտությունը և, ընդհանրապես, ազգային մշակույթը ստեղծագործական որակներից հեռացնելու որոշակի վտանգով: Որքան էլ, դժվար լինի հաղթահարել հանրության անվստահությունը, առաջնահերթ խնդիր պետք է համարել ինքնատիպ ստեղծագործությունների վրա շեշտադրում անելն ու դրանք հետևողականորեն հանրությանը մատչելի ու ընդունելի դարձնելը: Հաշվի առնելով ընտրված թեմայի առանձնահատկությունները, մենք բնականաբար քննարկման նյութ դարձրեցինք իրավական մշակույթի պատմաքաղաքական հարուստ ու ուսանելի նախադրյալները, սակայն համոզված ենք, որ այլ ոլորտի մասնագետները ևս կարող են մատնանշել համապատասխան նախադրյալների առկայության մասին, ինչը վկայում է, որ ազգային իրավական մշակույթի կամ հոգեկան մշակույթի ցանկացած այլ տարատեսակի ինքնատիպ զարգացման համար գոյություն ունեն իրական մեծ հնարավորություններ:

Ներկայումս արդարացիորեն աննախադեպ մեծ նշանակություն է տրվում հումանիզմի գաղափարին: Մարդկությունը, թերևս, գտնվում է հասարակական ինքնագիտակցության այն աստիճանին, որի պայմաններում խտրականությունը չի դիտարկ-

վում, որպես անհատական շահերի պաշտպանության կամ գերակայության միջոց: Ընդ որում, խտրականության նկատմամբ վերաբերմունքը, մեր կարծիքով, կարող է գնահատվել, որպես ժողովրդավարության կայացվածությունը բնութագրող ցուցիչ: Բոլոր դեպքերում, վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարության և քաղաքակրթության հարուստ փորձ ունեցող երկրներում խտրականության դրսևորումներն աստիճանաբար սակավ են հանդիպում, մինչդեռ՝ նույն այդ երկրների իշխանությունները հարկադրված են լինում նախաձեռնելու գործուն միջոցներ՝ այլ իրավական մշակույթներին պատկանող սոցիալական խմբերի ներկայացուցիչների կրոնական կամ այլ գաղափարներով թելադրված ակնհայտ խտրականության դրսևորումները կանխելու նկատառումով:

Այս դատողությունների հենքով ատենախոսությունում հանգամանորեն լուսաբանվում են միջանձնային փոխհարաբերությունների բարդություններն ու դրանց հաղթահարման ուղիները:

Իրավական մշակույթի բնութագրիչներից է նաև, այսպես կոչված, իրավախախտումների սահմանադծում գտնվող արարքների նկատմամբ հասարակական իրավագիտակցության բովանդակությունը: Խոսքը, մասնավորապես, այնպիսի արարքների մասին է, որոնք տարաբնույթ հիմքերով տվյալ երկրի օրենսդրությամբ չեն որակվում, որպես իրավախախտումներ, սակայն դրանք չեն խրախուսվում բարոյական նորմերով:

Վերջապես, լայն քննարկման նյութ է դարձել ընտանիքի ամրապնդման գործում իրավական մշակույթի դերակատարման հարցը: Ատենախոսությունում հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի առողջ ընտանեկան հարաբերությունները (ընդ որում հանգամանորեն վերլուծված են այդպիսի հարաբերությունների ձևավորման համար անհրաժեշտ քաղաքականության տարրերը) հանդիսանում են ամուր պետականության հիմք:

Եզրակացություն: *Ատենախոսության այս հատվածում ներկայացված են հետևյալ հիմնադրույթները՝*

ա) իրավական մշակույթը կիսաբաց է, ինչը թելադրված է որոշակի սոցիալ-քաղաքական նախադրյալներով, որոնք բնորոշ են նաև ԱՊՀ մի շարք պետությունների: Մասնավորապես, այն բովանդակում է կայուն տարրեր՝ միաժամանակ բաց լինելով միջազգային իրավունքի հիմնադրույթների մեծամասնության, ինչպես նաև արտասահմանյան երկրների փորձի ներդրման տեսանկյունից,

բ) «Իրավական մշակույթ» և «իրավական գիտակցություն» եզրույթների որոշ հիմնական տարրեր վերահիմաստավորման կարիք ունեն, ինչը թելադրված հետևյալ գործոնների անհրաժեշտությամբ՝ տարաբնույթ պատճառներով իրավունքի համակարգում ավանդույթի տեսքով սովորութային իրավունքի նորմերի աստիճանական նվազման միտումները, անհրաժեշտ իրավական գիտակցություն և իրավական մշակույթ ապահովելու նկատառումով ոչ միայն անհրաժեշտ իրավական իրազեկվածության, այլև իրավական նիհիլիզմը հաղթահարելու համոզմունք ձևավորելու խնդիրը, իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման վրա ազդեցություն ունեցող նորանոր գործոնների ի հայտ գալը, միջազգային խաղաղ գոյակցության տեսանկյունից արդի մարտահրավերների առկայությունը, դեռևս խորհրդային համակարգից ժառանգաբար փոխանցված անհարկի անվստահությունը ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ և այլն,

գ) կրոնի ազդեցությունն արդի դարաշրջանում ոչ միայն չի նվազել, այլև ձեռք է բերել նոր որակ ու դրսևորումներ, որոնք գործնականում ունեն ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցություն: Տվյալ դեպքում, հարկ է զերծ մնալ կտրուկ միջամտություններից և նպատակամետ ծրագրային միջոցառումներով աստիճանաբար նպաստել այնպիսի իրավագիտակցության ու իրավական մշակույթի ձևավորմանը, որում կրոնը կդադարի լինել ոչ միայն միջանձնային, այլև միջպետական հարաբերություններում անհանդուրժողականության աղբյուր,

դ) իրավական մշակույթի պատմաքաղաքական նախադրյալները կանխորոշում են արդի նախադրյալների բովանդակությունն ու ուղղվածությունը, Իրավական մշակույթի արդի նախադրյալների ու հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգային իրավական մշակույթը, ունենալով այլ իրավական համակարգերի շրջանակներում ձևավորված իրավական մշակույթի առնչությամբ ընդհանուր բնութագրիչներ, այնուամենայնիվ, էապես տարբերվում է դրանցից, ունի իր ինքնատիպ բովանդակությունը, ձևավորման առանձնահատուկ նախադրյալների ու գործոնների համակարգ, ինչպես նաև զարգացման միտումներ,

ե) իրավական մշակույթի զարգացման գերակա ուղղությունն իրավական համակարգում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծելն է: Այն կարող է նպաստել ինչպես բնականոն իրավաստեղծ, այնպես էլ՝ իրավաչափ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը,

զ) իրավունքի սկզբունքներն ունեն ոչ միայն գործնական նշանակություն իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեությունում, այլև իրավական մշակույթի ձևավորման գործընթացում: Իրավունքի սկզբունքների դերակատարումը կարող է չափազանց օգտակար լինել, պարզապես անհրաժեշտ են որոշ նախապայմաններ, որոնք, մեր կարծիքով, համակարգված տեսքով ունեն հետևյալ պատկերը՝ քաղաքական քարոզարշավների շրջանակներում իրավունքի սկզբունքներին անդրադարձը պետք է լինի չափազանց հավասարակշռված, հարկ է, որպեսզի պարտադիր համարվի իրավական նորմերի նախագծերին կցվող հիմնավորումներում տվյալ օրենսդրությանն առնչվող իրավունքի սկզբունքներին պատշաճ անդրադարձը՝ իրավական ակտերի նախագծերին նվիրված հանրային լսումների, ինչպես նաև արդեն իսկ ընդունված իրավական ակտերի դրույթների պարզաբանմանը նվիրված ելույթներում, ուսումնամեթոդական ձեռնարկներում նպատակահարմար է առավել հետևողականորեն անդրադառնալ այն խնդրին, թե այդ ակտերում որքանով են արտացոլված իրավունքի սկզբունքները, որքանով են դրանք երաշխավորված և այլն,

է) իրավական մշակույթի նկատմամբ միջազգային իրավունքի ազդեցությունը միանշանակ չէ: Միջազգային և ազգային իրավական համակարգերի համատեքստում իրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրների լուծումը համարժեք պատկերացնելու համար հարկ է հիմք ընդունել հետևյալ եզրահանգումները՝ նպատակահարմար է, որպեսզի միջազգային իրավունքի ձևավորման համար համարժեք աղբյուր հանդիսանան բոլոր իրավական համակարգերը, արևմտյան միջազգային իրավունքի և միջազգային կազմակերպությունների նկատմամբ որոշ տարածաշրջանների իրավական մշակույթի անհանդուրժողականությունը փաստ է և թելադրված կրոնական, էթնիկական, պատմաքաղաքական նախադրյալներով, երկակի չափանիշներ կիրառելու

երևույթն զգալիորեն նվազեցրել է վստահությունը միջազգային իրավունքի նկատմամբ և այլն,

ը) իրավական մշակույթը կանխորոշում է օրինականության և իրավակարգի ամրապնդման վիճակը: Օրինականության և իրավակարգի ամրապնդման տեսանկյունից իրավական մշակույթի դերի առնչությամբ առաջարկվել է որպես ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝ հարկ է ծրագրի կազմման հիմքում դնել այնպիսի միջոցառումներ, որոնք անխուսափելի կդարձնեն հանրության մասնակցությունը հանցավորության և իրավախախտումների դեմ պայքարին, վարչարարության ոլորտում նպատակահարմար է ներդնել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կբացառեն իրավունքի անբարեխիղճ սուբյեկտների նկատմամբ անհարկի արտոնյալ կարգավիճակ սահմանելը, հանցավորության դեմ պայքարի և օրինականության ամրապնդման տեսանկյունից համարժեք ռազմավարություն ընտրելու կարևորագույն ցուցիչը վերաբերում է կոռուպցիոն երևույթների դեմ պայքարում դեռևս խորհրդային իրավագիտակցության չափանիշների անհարկի գերակայությանը և այլն,

թ) իրավական մշակույթը նկատելի ազդեցություն ունի նաև սոցիալ-քաղաքական կյանքի այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են՝ պետական քաղաքականությունը, հոգևոր մշակույթի բոլոր ոլորտները, միջանձնային ու միջխմբային հարաբերությունները և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Վերահսկողության ինստիտուտի հիմնախնդիրները և դրանց իրավական-հոգեբանական ասպեկտները. «Արդարադատություն», Երևան, 2010, № 3(4), էջ 9-16:

2. Իրավունքի սկզբունքները որպես իրավական մշակույթի զարգացման նախադրյալներ, «Հանրային կառավարում», Երևան, 2011, № 1/2011, էջ 162-169:

3. Օրինականություն և իրավական մշակույթ. փոխհարաբերության արդի հիմնահարցեր. «Օրենք և իրականություն», Երևան, 2011, № 5(187), էջ 4-5 և № 6(188), էջ 17-18:

4. «Իրավական մշակույթ» և «իրավագիտակցություն» եզրույթների որոշ տարրերի վերահիմաստավորման անհրաժեշտությունը. «Օրինականություն», Երևան, 2012, № 70, էջ 33-38:

5. Իրավական մշակույթը, որպես միջազգային իրավունքի թիրախ. «Պետություն և իրավունք», Երևան, 2012, № 3(57), էջ 21-29:

Даниелян Артур

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ ФОРМИРОВАНИЯ ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена формированию и развитию основных вопросов сути правовой культуры, выявлению социально-политических предпосылок. Автор в результате исследовательской работы представил ряд научных заключений, которые дают возможность нового восприятия, при этом обьясняя суть национально-правовой культуры в сфере правотворчества и правоприменения, влияния на другие государственные функции.

В диссертации на научном уровне обосновано, что национально-правовая культура в настоящее время диктуется не столько национальными факторами, но и зачастую опытом международно-правовой культуры. По мнению автора, национально-правовая культура «полуоткрыта» и предназначена быть определенно стабильной, толерантной по отношению к международному правовому опыту. Важное умозаключение также было сделано в свете основных событий национального права. В частности, та точка зрения, что постоянное сглаживание сложных юридических терминов, само по себе не является основой обсуждения качества принципа определенности юридических норм. Решающую роль здесь играют юридически обоснованный практический опыт и традиции.

Правовая культура предопределяет формирование развития демократических институтов и их проявление, корректирует практическую деятельность государственных органов и должностных лиц.

Автором также представлены на защиту следующие научные заключения:

- сформированная правовая культура, в принципе, не адекватна решению задач раскрытия и предотвращения массовых преступлений, в результате чего в многочисленных случаях совершение преступления оказывается предпочтительнее, чем добросовестное поведение. В частности, в результате такой неодекватной правовой политики, зачастую предприниматели, злостно уклоняющиеся от уплаты налогов, в итоге оказываются в большем выигрыше, чем добросовестные бизнесмены,

- с точки зрения прововой культуры понятие «законодательная деятельность» приобретает более широкий смысл, поскольку даже когда законодательство долгое время остается неизменным, все равно происходят определенные изменения в психологии общества относительно толкования законодательных норм. Именно в результате таких психологических изменений в дальнейшем производятся изменения и дополнения в текущем законодательстве,

- целесообразно коренным образом пересмотреть процесы формирования и развития общечеловеческих ценностей юридического характера. В частности, не оправдивает себя тот подход, когда по сути приоритетным являются правовые институты и принципы лишь некоторых европейский стран,

- в условиях приоритета права, толкование принципа законности соприкасается с такими дополнительными атрибутами, как требования, предьявляемые к качеству законодательства, а также гарантированность исполнения требования правовых актов. То есть, с точки зрения приоретета права, принцип законности можно интерпретировать следующим образом: «законность предполагает принятие законов и других правовых актив, отвечающих требованиям демократии, естественных прав человека и стандартам международного права, а также их беспрекословное выполнение и гарантированность их исполнения»,

- нормы морального права по своему качеству должны превосходить правовые нормы. Нет необходимисти любую норму, которая и так выполняется на уровне правосознания обшества, обязательно закреплять в законодательном порядке. Моральное право от этого вовсе не выигривает,

- в условиях современных информационных технологий, на формирование правосознания общества часто огромное значение оказывает не столько отечественная государственная политика, сколько влияние международных событий.

Кроме заключений представленных на защиту в диссертационной работе были изложены многочисленные научно-профилактические предложения, которые напрапвлены как на усовершенствование законодательства, так и на усовершенствование правоприменимой практики. Более того, они в равной степени относятся как к судебно-правовой системе, так и к сфере реализации законодательной и исполнительной власти. Согласно автору, предложенные заключения и указанные предложения в значительной степени будут способствовать формированию правового сознания и правовой культуры.

Таким образом, научной новизной диссертационной работы является презентация подтверждения необходимости переосмысления современных восприятий таких терминов как «правовое сознание» и «правовая культура», презентация открытия рамки формирования историческо-политических и современных предпосылок правовой культуры, презентация определения приоритетных направлений правовой культуры, презентация анализа взаимодействия принципов права и правовой культуры, презентация исследования проявлений правовой культуры в контексте отношений межнациональных и национальных систем, презентация научно-обоснованных заключений в связи с влиянием правовой культуры в законотворческих, правоприменимых и других сферах.

Основополагающими факторами диссертационной работы являются труды ученых: психологов, юристов, социологов и философов, как национального, так и международного значения. А так же правовые акты и законы международного и национального права и практика.

Artur Danielyan

MODERN ISSUES AND TRENDS OF FORMATION OF CULTURE OF LAW

RESUME

The thesis is devoted to formation and development of the main issues constituting the merits of culture of law, as well as to the defining of social-political prerequisites. As a result of research, the author presented a number of scientific conclusions, which provide opportunities for new perceptions, meanwhile explaining the essence of national-legal culture in the area of law making and law enforcement, and the influence thereof on other functions of government.

In the dissertation, it was scientifically corroborated that, at present, national-legal culture is based on international-legal practice, rather than on national factor. According to the author, the national-legal culture is a «semi-culture» and is called for certain stabile, tolerant approach towards international legal practice. An important conclusion was also made in the view of the key developments of national law. Particularly, the point of view that permanent leveling of complex legal terms, in itself is not a ground for discussion of the quality of principle of certainty of legal norms. In this case, the decisive role is reserved to legally grounded practical practice and traditions.

The legal practice is a precondition for formation of democratic institutions and the demonstration thereof, modifies practical activities of the state bodies and the officials thereof.

Moreover, the author underpinned his/her position by means of the following scientific assumptions:

- the formation of legal culture, in principle, is not adequate to the solution of the issue of disclosure of prevention of mass crimes, as a result of which in many cases commission of crime is more preferable, than bona fide behavior. Particularly, as a result of such inadequate legal practice quite often the entrepreneurs, maliciously avoid taxes, and eventually get big gains, in comparison with honest businessmen,

- from the point of view of legal culture the concept of “legislative business” acquires a wider sense since even if the legislation is not amended for a long time, nevertheless, there occur definite changes in the psychology of the society in regards to the interpretation of the legislative norms. It is as a result of such psychological changes that in future amendments and addendums are made to the legislation in force.

- It is reasonable to radically review formation and development processes of the universal values of juridical nature. In particular, the approach when in fact priority is given to juridical institutions and principles of only certain European countries, is not justified.

- In view of the priority of the law, the interpretation of the legality principle abuts on such additional attributes as the requirements to the quality of legislation as well as the warranty of compliance with the requirements of the legal acts. That is to say that from the

point of view of the law priority the principle of legality can be interpreted in the following way "legality presumes adoption of laws and other legal instruments that meet the requirements of democracy, the natural human rights and the standards of the international law, as well as their implicit implementation and warranty of their fulfillment.

- the norms of the moral law should excel legal norms in their quality. There is no necessity to secure in the legislative manner any norms that are already complied with in the level of society's sense of justice. The moral law does not benefit from it at all.

- in view of the modern information technology a huge impact on the formation of the society's of sense of justice has rather the influence of international events than the government domestic policy.

The fundamental factors of the dissertation are the works of scientists: the psychologists, lawyers, sociologists and philosophers, both of national and international value. As well as legal acts and laws of international and national legislation and practice.

Except the conclusions presented to the defense in this thesis work, here are stated various theoretical and practical offers, which are aimed as at legislation improvement, so at improvement of law enforcement practice. Moreover, they equally regard as to judicial system, so to the realization of legislative and executive spheres. According to the author, proposed conclusions and mentioned offers will considerably promote the formulation of «legal culture» and «legal consciousness».

So, the scientific novelty of the thesis is the presentation of justification of the necessity of re-comprehension of the modern scientific understanding of the terms «legal consciousness» and «legal culture», the revelation of the frames of modern and historical – political prerequisites of legal culture development, clarification of prevailing spheres of legal culture development, analysis of the interaction of law principals and legal culture, legal culture manifestation in the relationship contest of national and international legal systems, scientifically well-grounded conclusions connected with law-making, law enforcement and revelation of legal culture in other spheres.